ՄԻՋԱՎԱՅՐԻ ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ԵԳԱՆՅԱՆ Գ. Գ.

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Կրթական միջավայրի և դրա դիագնոստիկայի ֆենոմենը համալրված է ժամանակակից հետազոտությունների լայն շրջանակով: Կրթական միջավայրի վերաբերյալ տարբեր տեսաբանների ուսումնասիրությունները թույլ են տալիս բացահայտել միջավայրը, դիագնոստիկայի արդյունքով սահմանել հետագա գործունեության նպատակը, գնահատել դրանց հասնելու, և իրագործելի ծրագրի իրականացման քայլերը: Կրթական միջավայրի գնահատման արդյունքների ներկայացումն ապահովում է կրթական հաստատության մասին օբյեկտիվ տեղեկատվություն ստանալու հնարավորությունը:

Տարբեր են մտածումներն այն մասին, թե ի՞նչպես պետք է ճանաչել կրթական միջավայրը, բացահայտել՝ հաստատության կրթական միջավայրը, և ի՞նչ պետք է լինի արտացոլված այդ սահմանման մեջ:

Միջավայրը բնական (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական) և սոցիալական գործոնների ամբողջություն է, որոնք կարող են ուղղակիորեն կամ անուղղակիորեն, ակնթարթորեն կամ երկարաժամկետ ազդել մարդկանց կյանքի և գործունեության վրա: Անձը որքան ավելի շատ ու ավելի լիարժեք է օգտագործում շրջակա միջավայրի հնարավորությունները, այնքան նրա ազատ և ակտիվ ինքնազարգացումն ավելի արդյունավետ է ընթանում: Մարդը միաժամանակ իր միջավայրի արդյունքն ու կերտողն է, ինչը նրան կյանքի ֆիզիկական հիմք է տալիս և հնարավոր դարձնում մտավոր, բարոյական, սոցիալական և հոգևոր զարգացումը (Ստոկհոլմի հռչակագրի ներածություն, որն ընդունվել է 1972 թ. Միավորված ազգերի կազմակերպության համաժողովում) [1, էջ 143-144]:

Հոդվածում դիտարկել ենք կրթական միջավայրի դիագնոստիկայի հիմնախնդիրը, որի միջոցով ցանկանում ենք վերլուծահամադրաբար ընդգծել հատկապես մանկավարժական գործընթացի արդյունավետության տեսնակյունից կարևորելի միջավայրի ոչ նյութական բաղադրիչների դիագնոստիկայի վերաբերյալ մոտեցումները:

«Միջավայր» եզրույթը այժմ լայնորեն կիրառվում է տարբեր գիտություններում՝ հատկապես հումանիտար ճյուղում:

Սույն հոդվածում փորձել ենք ներկայացնել շրջակա միջավայրի դիագնոստիկ հիմնախնդիրը, կարևորելով հատկապես շրջակա միջավայրի նյութական և ոչ նյութական պայմանների ամբողջությունը, որոնք ազդում են անձի գիտակցության, կարողությունների,

պահանջմունքների, հետաքրքրությունների ձևավորման և զարգացման վրա: Այս առումով տեղին է մատնանշել Լ. Ի. Նովիկովայի այն տեսակետը՝ ով փոխգործակցության փաստը համարում է միջավայրը նույնականացնելու հիմնական չափանիշ. «միջավայրը շրջակա աշխարհի այն հատվածն է, որի հետ փոխազդում է սուբյեկտը» [2, էջ 3–4]:

Մենք նաև համաձայն ենք Վ. Ա. Յասվինի հետ, ով պնդում է, որ. «անձը մեկ այլ անձի համար նույնպես հանդես է գալիս որպես շրջակա միջավայրի տարր՝ ազդելով նրա վրա իր վերաբերմունքով և քայլերով» [3, էջ 11]:

Մանկավարժությանը այսօր ավելի է հետաքրքրում կրթական միջավայրի դիագնոստիկայի հուզական համատեքստը, քանի որ հուզական մթնոլորտը, համագործակցության և համաստեղծման հարաբերությունները թույլ են տալիս ավելի արդյունավետ հաղորդակցվել և լուծել առաջացող խնդիրները: Շրջակա միջավայրի որակը կարևորվում է ժամանակակից կրթական հաստատության կենսական գործունեության ցուցանիշների տեսանկյունից: Ուստի, հաստատությունը պետք է հանդիսանա հոգեբանական առումով հարմարավետ, զարգացնող և աջակցող միջավայր՝ ուղղված սովորողների ուսման մոտվացիայի բարձրացմանը, ստեղծագործականության զարգացմանը, ուսուցիչների և աշակերտների ինքնազարգացմանն ու նախաձեռնողականությանը: Այս ամենը կարող ենք ամբողջացնել որպես կրթական միջավայրի դիագնոստիկայի, նախագծման և մոդելավորման համակարգ: Կրթական հաստատության միջավայրի դիագնոստիկան բազմակողմանի և բարդ համակարգելի երևույթ է:

Հոդվածը բովանդակում է հիմնականում միջավայրի ոչ նյութական բաղադրիչների դիագնոստիկան՝ արժեքներ, վերաբերմունք, գործունեության շարժառիթներ, սուբյեկտի ինքնազգացողություն միջավայրում, մթնոլորտ, տրամադրություն, զգացմունքներ, հույզեր և այլն:

Վ. Ա. Յասվինի առաջարկած կրթական միջավայրի դասակարգման հիմքը հետևյալ բնութագրիչներն են՝ ազատություն, կախվածություն, ակտիվություն, պասիվություն: Կրթական միջավայրի արդյունավետ և հստակ ուսումնասիրության համար Վ. Ա. Յասվինը կառուցում է կոորդինատային համակարգ, որը բաղկացած է երկու առանցքներից՝ առանցք «ազատություն-կախվածություն» և առանցք «ակտիվություն-պասիվություն»: Այս պարամետրերի համակցումները ցույց են տալիս միջավայրի տեսակը, որը գոյություն ունի որոշակի մանկավարժական համակարգում կամ կրթական հաստատությունում:

Ըստ այդմ էլ տարբերակում են կրթական միջավայրի չորս տեսակ՝ ստեղծագործական միջավայր(ակտիվ և ազատ), դոգմատիկ միջավայր(պասիվ և կախված), կարիերայի միջավայր(ակտիվ և կախված) և հանգիստ միջավայր(պասիվ և ազատ):

«Կրթական միջավայրի համապատասխանող այս կոորդինատային համակարգի որևէ տիպի վեկտորի կառուցումն իրականացվում է վեց դիագնոստիկ հարցի միջոցով: Այս հարցերի պատասխանները թույլ են տալիս պարզել, թե որ հետաքրքրություններն ու արժեքներն են գերակշռում տվյալ կրթական միջավայրում (անձնային կամ հասարակական), ո՞վքեր և ո՞ւմ են հարմարվում փոխազդեցության գործընթացում (մանկավարժը երեխային կամ երեխան մանկավարժին), դաստիարակության ո՞ր ձևն է հիմնականում իրականացվում տվյալ կրթական միջավայրում (անհատական, թե կոլեկտիվ), արդյոք պատիժը կիրառվում է տվյալ կրթական միջավայրում, և որքանով են երեխայի նախաձեռնողականությունն ու ստեղծագործական դրսևորումները ողջունելի» [3, էջ 37–39]:

Հանրակրթական դպրոցի կրթական միջավայրը դեռևս դիագնոստիկ առումով ամենաբարդ օբյեկտներից մեկն է, որը հնարավոր չէ ներկայացնել և գնահատել ընդհանուր առմամբ: Նման օբյեկտների ուսումնասիրության համար արդյունավետ է Ի. Կալինաուսկասի և Գ. Ռեյնինի առաջարկած համակարգի որակական մեթոդը /ՀՈՄ/: Հեղինակներն առաջարկում են ուսումնասիրել բարդ օբյեկտները սուբյեկտիվ և օբյեկտիվ տեսանկյուններից.

- «ըմբռնում, բացատրություն, նկարագրություն, ինչպես նաև օբյեկտիվ փաստեր և հանգամանքների տրամաբանություն,
- ներքին զգացողություններ, ինքնազգացողություն, ինչպես նաև գործողություններ, զգայական դրսևորումներ, կամք և այլն,
- ներքին ներդաշնակություն, տրամադրություն, իրադարձությունների, գործողությունների գնահատում, անձանց ինտուիցիա, ժամանակի զգացում, ինչպես նաև նախօրոք հայտնի իրադարձությունների շղթա, հնարավոր հնարավորությունները, վարքի դրսևորման ծրագրերը, կենսակերպը, կյանքի ռիթմը,
- անձի և նրա միջավայրի հարաբերությունները, էթիկա» [5, էջ 18–30]:

Այս մեթոդի կիրառմամբ Գ.Ռեյինն առաջարկում է վերլուծել ուսումնական հաստատության միջավայրի որակը՝ հենվելով հետևյալ ասպեկտների վրա. «կազմակերպություն(դպրոցական միջավայրի կառուցվածք), գործունեություն (ներառյալ ուսուցման, դաստիարակության արդյունքները), կապեր, հաղորդակցություն(արձագանք շրջակա միջավայրի ազդեցություններին), համակարգում(շրջակա միջավայրի կառավարման համակարգ)»[5, էջ 18–30]:

Վ. Ի. Իվանովան կարծում է, որ կրթական հաստատության միջավայրի լիարժեք դիագնոստիկան անհնար է առանց դրա ոչ նյութական բաղադրիչի ուսումնասիրման: Ըստ հեղինակի, առանձնահատուկ նշանակություն ունեն, կրթական գործունեության դրդապատճառները, որոնք գերիշխում են առկա միջավայրում:

Շրջակա միջավայրի ամենաբարձր մակարդակը, Վ. Ի. Իվանովայի տեսանկյունից, համապատասխանում է ստեղծագործական, ինքնազարգացման, ինքնակատարելագործման, մասնագիտական ինքնաիրացման շարժառիթներին [4]: Եթե շրջակա միջավայրը դիտարկենք որպես պայմանների շարք, ապա այդտեղ կարևոր տեղ է զբաղեցնում անձ-անձ հարաբերությունների բացահայտումը, որի դիագնոստիկայի համար կարող ենք կիրառել սոցիոմետրիան և նկարչական բազմաթիվ թեստեր:

Միջավայրի դիագնոստիկայի համար կիրառելի է «*Խորհրդատուի կերպարը*» մեթոդիկան: Է. Վ. Ռեմիզովան նշում է, որ. «այս մեթոդիկայի արդյունքում նկարների վերլուծությունը թույլ է տալիս բարենպաստ մթնոլորտի և թիմում առկա հարաբերությունների մասին եզրակացնել, երբ նկարները ներկայացված են վառ գույներով, ընդգծված են նույնիսկ մանրամասները, որտեղ առկա են հստակ ուրվագծեր»[4, էջ 139–140]:

Մանկավարժների համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում ընտանեկան միջավայրի դիագնոստիկան. փաստերի նկարագրման տարբեր ձևեր (ընտանիքի կազմը, տարիքը, կրթությունը, ծնողների աշխատանքի վայրը, նյութական պայմանները և այլն), որոնք կիրառելի են հատկապես սոցիալական մանկավարժների և դաստեկների համար: Այնուամենայնիվ, դրանք ցույց չեն տալիս ընտանիքում հարաբերությունների էությունը, թույլ չեն տալիս որոշել գերակա արժեքները, առկա խնդիրները: Ընտանեկան միջավայրը և ընտանիքի կրթական տարածությունը կարելի է նկարագրել՝ վերլուծելով կենսակերպը (հետաքրքրությունների շրջանակը, ընդհանուր և անհատական խնդիրները, ընտանիքի անդամների հաջողությունները, ավանդույթները, կանոնները հարաբերություններում) և ինչպես նաև ընտանեկան միջավայրի նյութական բաղադրիչները (բնակարան, զարդարանք, գրադարան, առանձնասենյակներ, գրասենյակներ, ընտանիքի անդամների «խորշեր», հպարտության առարկա-արժեքներ, ընտանեկան ժառանգություն և այլն): Վերոնշյալ նկարագրությունը ընտանեկան միջավայրի դիագնոստիկայի կամ դրա կրթական տարածքի ձևավորան համար օրինակ է հանդիսանում:

Ընտանեկան միջավայրի հիմնական բնութագրերը որոշելու համար (ավտորիտար, արդար, հոգատար, բարձիթողի) մշակվել է դերախաղ «*Նոր գնում*»:

Խաղի ընթացքում մեծահասակները և երեխաները փորձում են արդարացնել չնախատեսված իրավիճակում ընտանիքի «գլխավորի» եկամուտից իրենք իրենց համար նոր գնում կատարելու անհրաժեշտություն՝ ցույց տալով հարաբերությունները, որոնք զարգացել են իրական կյանքում, ցույց տալ իրենց բնորոշ վարքագծի ոճը ընտանիքում և՝ ի վերջո տարբերակելով «կարիքավորին»: Խաղի պայմանների համաձայն, ընտանիքի անդամներն ունեն միմյանց մասին բաց տեղեկություններ, որոնք ներկայացված են խաղի

հրահանգավորման մեջ և լրացուցիչ տեղեկություններ, որոնք թաքնված են ընտանիքի այլ անդամներից: Հիմնական տեղեկատվություններ են հանդիսանում ընտանիքի անդամների տարիքը, սոցիալական կարգավիճակը, տանը նրանց ծանրաբեռնվածությունը և ընտանեկան բյուջեից խոշոր և բաղձալի վերջին գնման ամսաթիվը:

Լրացուցիչ տեղեկատվությունը ցույց է տալիս խաղացողների ցանկություններն ու ներքին թաքնված շարժառիթները: Ընտանիքի ղեկավարի խնդիրն է հարցի քննարկում կազմակերպել և դյուրացնել ընտանիքի անդամների կոլեկտիվ որոշման ընդունումը, թե ո՞վ կստանա նոր չպլանավորված գնումը: Ըստ խաղի պայմանների՝ անհնար է բաժանել միջոցները: Փորձագետը պետք է դիտարկի «ընտանիքի անդամների» կողմից քննարկման ընթացքը, այն հարցի շուրջ, թե ով պետք է կատարի նոր գնում և խաղացողների դրդապատճառները քննարկման ընթացքում՝ միմյանց հետ հարաբերությունները՝ ստացած դերի համապատասխանությունը: Ըստ այն որոշման, թե ով է ստանալու նոր գնում կատարելու հնարավորություն և այդ որոշման հիմնավորումը, տարբերակում են «ընտանիք» խաղի հիմնական բնութագրերը:

Մանկավարժը, ըստ խաղի դիագնոստիկայի, եզրակացնում է ընտանիքում ձևավորված հարաբերությունների ոճը, ժողովրդավարական հնարավոր լուծումները, ինչպես նաև, արդար և հումանիստական հարաբերությունների ցուցանիշները ընտանեկան կյանքում:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ մանկավարժական գործընթացի արդյունավետության, որակյալ կրթության համար կարևորվում է միջավայրի դիագնոստիկան: Ամենից հաճախ դիագնոստիկ տեսանկյունից ուսումնասիրում են կրթական հաստատությունների կրթական կամ դաստիարակչական միջավայրի տարատեսակ կողմնորոշումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Եգանյան Գ. Գ., Մանկավարժական դիագնոստիկա / Գ. Եգանյան.- Եր.: ՎՄՎ-Պրինտ, 2020.- 232 էջ:
2. Новикова Л. И. Школа и среда. М., 1985.
3. Ясвин В. А. Образовательная среда: от моделирования к проектированию. М., 2001.
4. Иванова В. И. Акмеологическая концепция формирования образовательной среды подготовки специалистов. Автореф. дисс. … д-ра пед. наук.
5. Рейнин Г. Тайны типа. Модели. Группы. Признаки. М., 2009.
6. URL: http://dissers.ru/avtoreferatidissertatsii-pedagogika/a449.php.:

ENVIRONMENTAL DIAGNOSTICS IN THE FIELD OF PEDAGOGY

The paper deals with the problem of diagnostics of the environment of the educational organization. It discusses existing pedagogical approaches to the diagnosics of intangible components of the environment and also gives examples of employing various methods of diagnostics of the environment in social and educational activities. The paper comes to a conclusion about the necessity of integrating ideas of pedagogical science and practice with the aim of improving the quality of the environment of educational institutions.

Keywords: *Social and pedagogical activity, environment, educational environment, educational environment diagnostics, vector environmental methods, drawing tests, family environment, role play.*